




Կանոնագրասկ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՅ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԹԻՒ 46




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ  هانراكيداق  HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ  مجموعة علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 46 || 15 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

Ա. Զ. Բ. Ե. Բ.

ՓՈՔՐԻԿ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

Սընդուսէ գրգուռս եքերն աչերուդ
Ձիւնափայլ ճակտիդ պարփակումին տակ,
Գոհարասուփն է հըմայնով ջերուս,
Մհտաֆառեջ, նուրբ կոյնով ըսպիտակ:

Իայց աղամանդի զերք ցոյժ փալփըլուն,
Արցունքի երբոր շիթն հոն չի՛ դողար,
Թովանքը կապոյտ այդ երկինքներուն,
Կը խուսափի, զերք անծաղիկ թաղար:

Եւ կամ գոհարի տուփին պէս փայլուն,
Բիւրեղ արցունքն ուր երբեք չի ցոլար,
Արեւակին կամ թօշ սուտակներուն,
Զըկըրած շուկէն, ցոյքէն դողահար:

Մ. Կ. ՄԵՄԱՏՈՒՐԵԱՆ



ԱՌԱՇՆԵՐ ՈՒ ԱՌԱԿՆԵՐ

ԲԱՐԵԿԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ

(Շարունակութիւն 45րդ Թիւէն եւ վերջ)

— Կարելի չէ բարեկամ կոչել մեկը որուն հետ աղ ու հաց կերած չի մարդ:

Արիստոտէլ եւ Պլուտարքոս գործածած են այս առածը, որուն իմաստը սա է թէ բարեկամութիւնը չի կրնար յեղակարծ կազմուիլ, եւ թէ պէտք է որ ժամանակ անցնելով հաստատուի: «Նման այն ազնուական ու անապական գինիներուն որոց գինը կ'աւելցնեն տարիները, կ'ըսէ Կիկերոն. որքան հիննայ բարեկամութիւնը նոյնքան կատարեալ կ'ըլլայ, եւ իրաւամբ է որ մշտածուած է թէ պէտք է ի միասին շատ աղ ու հաց ուտել մինչեւ իսպառ հասուննայ, կատարելանայ:

Բարեկամութիւնը Ս. Գրքին մէջ ալ բաղ:տտուած է գինիին հետ. «բարեկամութիւնը նման է նոր գինւոյ մը. ան պիտի հիննայ, եւ յայնժամ դուն զայն հաճոյքով ըմպես»:

— «Բարեկամութիւնը, աղի համաձայնութիւնը»:

Միջին դարու մէկ առածն է բացատրելու համար թէ բարեկամութիւնը պարտի յուշիկ յուշիկ կազմուիլ եւ ըլլալ միշտ տեւական: Աղի դաւիթ բառերը գործածուած են Ս. Գրոց մէջ, ուր կը նշանակեն անբնաբարելի դաշնակցութիւն մը, ակնարկելով աղին բնութեան որ կ'արգելու ապականութիւնը: Ղեւտացոց գրքին մէջ պատուիրուած էր աղ նուիրել ամէն զոհարարութեանց մէջ: Հոմերոս աղին տուած է ասուածային մակդիրը: Պիւթագորոս աղը կ'նկատէր իբրեւ արդարութեան խորհրդանշան եւ կ'ուզէր որ միշտ աղ գտնուի սեղանին վրայ: Վաղապլը մատենագիրը կ'հաւատայ թէ հին Փրանգները (Ֆրանսացիները) աղը կ'գործածէին իրենց դաշնադրութիւններու կնքումին, ցուցնելու համար թէ անոնք միշտ տեւական պիտի ըլլային եւ մէկ քանի հեղինակներ մտածած են թէ loi salique (սալեան օրէնքին) անունը ածանցած ըլլայ աղի սոյն գործածումէն:

— Մեկ բարեկամը կ'բերէ ուրիշ բարեկամ մը:

Տուն մը հրաւիրուած անձ մը իրեն հետ հոն կ'տանի ուրիշ անձ մ'ալ, որուն չէին սպասեր, եւ այս բարեկամին ներկայացումը կ'կատարուի չքմեղացումներով որոց կ'պատասխանուի, բարեկամ մը կ'բերէ ուրիշ բարեկամ մը:

— Պղատոնի բարեկամ, բայց նեմարսութեան աւելի բարեկամ:

Այս առածը Արիստոտէլի մէկ խօսքն է, իրեն վարպետին՝ Պղատոնի, մէկ քանի փիլիսոփայական կարծիքներուն դէմ իր ըրած՝ յարձակումներն արդարացնելու մտօք:

— Բարեկամ՝ փոխ տալու մեջ, քեցամի՝ վնարելու մեջ:

Առած՝ որ առնուած կ'երեւի Պղատոնի սա մտածումէն. թէ որ փոխ տուած ստակդ վերստին առնել կ'ուզես, պիտի գտնես յաճախ թէ քու բարութիւնդ բարեկամ մը քեզ ըրած է թշնամի մը:

— Կ'գտնենք Կ. Մորիէ հեղինակի գրոց մէջ սա առածը. «Աստուծոյ փոխ տալուն, սասանալին վնարելուն»: Սպանիացիներն ունին սա առածը. «Փոխ տուողը, չսանար տուածը. եթէ սանայ, ո'չ ամբողջը. եթէ ամբողջ, ո'չ այնպէս. եթէ այնպէս, մահացու քեցամի»:

Անգղիացիները կ'ըսեն. «Ի՞նչ ստակը բարեկամին փոխ տուողը կրկին կ'կորսնցնէ». այսինքն ստակն ու բարեկամը:

— Հին բարեկամներ ու նոր հաշիւներ:

Ըսելու համար թէ իր բարեկամները պահելու միջոցն ան է որ իր հաշիւները միշտ անոնց հետ աղէկ կարգադրած ըլլայ: Նոր անօթները եւ հին բարեկամները լաւագոյններն են, կ'ըսէին Յոյներն ու Լատինները. նմանօրինակ իմաստով մը:

«Աղէկ հաշիւները կ'երեւն աղէկ բարեկամները»:

Առած՝ զոր ի գործ կ'դնեն մարդիկ սովորաբար բարեկամի մը կողմանէ ներկայացուած հաշիւ մը կամ յիշատակագիր մը աչքէ անցնելը արդարացի համարելով:

— Բարեկամաց հետ հաշիւ ընելու չի:

Նախորդ երկուքներուն հետ հակասական եղող այս առածը կ'նշանակէ թէ պէտք է աւելի առատաձեռն ըլլալ քան թէ շահասէր այն գործերուն մէջ զորս կարելի է ունենալ իր բարեկամաց հետ:

Շատերը կ'ըսեն. l'amitié mesure par tonneaux et le commerce par grains, որուն թրքերէն բացատրութիւնն է, սօսքով գանբար իի ավրեվերիս մըսգալ իիէ:

— Բարեկամներու միջեւ ամէն ինչ հասարակաց ըլլալու է:

Այս առածը շատ հին է: Եպիկուրոս կ'պարտաւէր Պիւթագորոսը որ զայն տառական իմաստով ի գործ կ'դնէր պարտաւորելով իր աշակերտները որ իրենց բոլոր ստացուածքներն հասարակաց ընեն, այսինքն իրարու մէջ բաժնեն: Եթէ ես ունիմ ճշմարիտ բարեկամ մը, կ'ըսէր Պիւթագորոս, չե՞մ միթէ նաեւ

տէրն անոր ինչքերուն, որպէս թէ զիս անոնց աւանդապահն ըրած ըլլայ: Միթէ նուա՞զ արծէք ունի իր սիրտը քան իր հարստութիւնները տալը: Ես չարաչար գործածելու չեմ այս բարեկամին գորովասրտութիւնը. ինչ որ ունի ան պարտիմ խնայել, տնտեսել զայն իմ սեփական ունեցածիս պէս. բայց ես անոր նախատանք մը կ'ընեմ երբ պահանջեմ որ իր ինչքը երրորդի մը վստահի մեր հասարակաց պէտքերուն համար:

— Պէտք է սիրել իր բարեկամները անոնց քերուքիւններուն հետ:

Այսինքն պէտք է ներողամիա աչքով նայիլ մեր բարեկամներուն թերութեանց. վասնզի ներողամտութիւնը կ'աւելցնէ բարեկամութիւնը, եւ խստասրտութիւնը զայն կ'նուազեցնէ: Խնդիրն է հոս այն փոքրիկ թերութեանց համար որք գէշ հետեւանքներ չեն ունենար: Բարեկամներու թերութեանց համար հաճոյակատարութիւնը պիտի ըլլար բարոյականին եւ բարեկամութեան իսկ հակառակ:

— Ապականեալ սրտերու համար եղած չէ երբեք բարեկամութիւնը:

ՎՈՒԹԵՌ

Պէտք է փորձել բարեկամները փոքրիկ առիթներու մէջ:

ԱՐՄԷՆ

Ո՞Վ ՀՆԱՐԵՑ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

ՆՈՒԷՐ՝ ԲՐՈՋՄ՝ ՀՈՒՓՍԻՄԷՆՆ

Ո՞վ լսած չէ այսօր երկաթուղւոյ մասին. ո՞վ չի ճանապարհորդէր երկաթուղիով: Հարուստը, աղքատն ու բանւորը, որոնք գործերը վերջացուցած տուն կը դառնան, հաւասարապէս կ'օգտուին անկէ: Դէպի երկաթուղւոյ կայարանը կը վազեն ձիաւորներն ու հետիոտները, ոմանք շտապով տոմսակ կ'առնեն, ոմանք կ'աշխատին շուտ մը սնտուկներն ու կապոցները յանձնել կ'առախումբին, ամէնէն ծանրաշարժ մարդն անգամ կարծես բայլը կարագցնէ: Իսկ վակոնները արդէն շատոնց պատրաստ են և երկար գծով շարուած իրարու ետեւ. շոգեկառքը արդէն կը հեւայ բոլոր ուժովը:

Ահա զանգակը հնչեց և ամէնքը կը նետուին դէպի կառքերը.

ամէն մարդ կը խորհի իրեն ու իր իրեղէններու վրայ, ամէն մէկը առաջ կը վազէ և կ'աշխատի հանգիստ տեղ մը գտաւել, վերջապէս բոլորն ալ նստեցան. լսուեցաւ երկրորդ զանգակը, յետոյ երրորդը, չոգեկառքը սուլեց, անիւները գլորդացին և կառախումբը սլացաւ: Կառքերու մէջ, որը երեսը խաշակնքեց, որը հառաչեց, որը ժպտաց խորհելով որ շուտով կը տեսնուի ծնողքին ու բարեկամներու հետ. իսկ յետոյ քիչ քիչ կը սկսի խօսակցութիւնը հունձքի, հացի ու վաստակի մասին: Վակոններու մէջ շատ աւելի լաւ է քան թէ ձիու վրայ. ձիու վրայ մէջքդ կը հոգնի, անձրեւն ալ կը թրջէ քեզ, իսկ այստեղ հանգիստ նստէ ինչպէս սենեակիդ մէջ և ազատ խօսէ որչափ որ կամիս: Կայարանի առջեւ չոգեկառքին առատ ջուր կուտան, փայտով կը կշտացնեն և կը թռչի թռչունի պէս, կը հեւայ ու կը սուլէ. չես նշմարեր անգամ թէ ինչպէս մէկ օրուան մէջ մի քանի հարիւր մղոն տեղ կ'անցնի: Երբ պատուհանէն դուրս նայիս, կը փախչին մարգագետիններ ու արտեր, կ'երեւին եկեղեցիներու ոսկեզօծ խաչեր, ճանապարհի այս ու այն կողմը շինուած են կարմիր ներկուած պահականոցներ, իսկ ճանապարհի պահպանները ձեռքերը կանանչ դրոշակ բռնած կը դիմաւորեն կառախումբը:

Գիշերը վրայ հասաւ, բայց ճանապարհորդները գիշերելու տեղի համար չեն խորհիր— ո՛վ ուրտեղ նստած էր, հոն ալ տեղաւորուեցաւ: Մէկը գլխուն տակը դրեր է պարկը, միւսը՝ կապան, երրորդը՝ կռթներ է հարեւանի ուսին: Հանգիստ կը քնանան ճանապարհորդները և երազներու մէջ անգամ չեն խորհիր, թէ ո՛վ էր այն մարդը, որ առաջին անգամ մտածեց իրենց համար այդպիսի դիւրութիւններ, ո՛վ յղացաւ երկաթուղի շինելու գաղափարը:

Մինչդեռ պէտք է այն մարդուն յիշատակը պահել, որ ամբողջ կեանքին մէջ կ'աշխատէր և կը մտածէր, թէ ինչպէս ընէ որ թէ ձիերը և թէ մարդիկ չյոգնին և կարողանան հանգիստ ու արագ ճանապարհորդել. կ'արժէ գիտնալ այդ մարդուն կեանքը մանաւանդ անոր համար, որ նա հասարակ ու շատ խեղճ հանքագործ աշխատաւոր մ'էր, որուն Աստուած միայն խելք ու համբերութիւն էր պարգեւեր: Ով որ չի ծուլանար կարգալ, ինչ որ գրուած է հոս՝ այն կ'իմանայ այդ խելացի մարդուն պատմութիւնը:

Մեզմէ գրեթէ 100 տարի առաջ, մեզմէ շատ հեռու, ծովէն անդին, այն երկրին մէջ, որ Անգլիա կ'անուանեն, կ'ապրէր խեղճ բանուոր մը, որուն մականունն էր Սթեֆէնսոն: Անոր ընտանիքը մեծ էր, կերակրելը դժուար և խեղճը կ'աշխատէր առտուրնէ

միջեւ երեկոյ, իսկ աշխատանքը դիւրին չէր, որովհետեւ ան կը
ծառայէր ածուխի հանքի մէջ:

Ով որ տեղեկութիւն չունի ածխահանքի վրայ, ես հիսա կը
պատմեմ, թէ ինչպէս կը լինին ածխահանքերը:



Քարածուխի հանքի մէջ հրդեհ, զործաւորներու ծնողներն ու
ազգականներն եկած են զանոնք ազատելու:

Շատ տեղեր երկրի տակ կան քարածուխի մեծ խաւեր: Այս
ածուխը գրեթէ նոյն գոյնը ունի, ինչ որ սովորական փայտա-
ծուխը, բայց միայն շատ աւելի կարծր է: Ո՛չ ոք պատրաստած
է զայն. քարածուխը գոյացաւ բնական պատճառով, որ այն
տեղերու վրայ ուր շատոնց, կարելի է հարիւր հազար տարիներ
առաջ անտառներ կային: Ոչ ոքի մտքէն կ'անցնէր կտրել այդ
անտառները, ոչ ոքի պէտք էին անոնք, որովհետեւ չափէն աւելի



Հանքին մէջ աշխատող գործաւոր տղեկի մը անշնչացած
մարմինը՝ դուրս կը հանէ իր հայրը


շատ էին և այսպէսով ծառերը կը բռնէին, կը ծերանային ու
կ'իյնային: Անոնցմէ ոմանք կը մնային իրենց տեղերը, միւսները,
որոնք գետերու եզերքները բուսած էին, գետի հոսանքով ուրիշ
տեղեր կը տարուէին, վերջապէս տեղ մը կը հանդիպէին եզեր-
քին, դէմ կ'առնէին եւ ազի ու տիղմի հաստ խաւով մը կը ծած-
կուէին: Ծառերն այսպէս կը մնային ամբողջ շարքերով, կը սեւ-
նային, բայց չէին փտեր հողին տակ, որովհետեւ շատ խեժոտ
էին, եւ ատկից զաւ օդ ալ չէր բաներ հողի հաստ խաւին տակ,
որ տարուէ տարի աւելի կը հաստնար:

Անցան հարիւրաւոր հազարաւոր տարիներ եւ այդ ծառերն ալ
ծուխի պէս սեւցան եւ քարի պէս կարծրացան: Այս ածուխը չափ

լաւ կը վառի եւ շատ տաքութիւն կուտայ: Եւ ահա այն երկիրներու մէջ, ուր անտառներ քիչ կային, մարդիկ մտածեցին վառարաններու համար քարածուխ գործածել, քանի որ գետնին տակ կարելի էր գտնել անկէ մեծ քանակութեամբ:

Շատ երկիրներու մէջ ալ կայ այդպիսի ածուխի հանքեր, բայց չեն հաներ: Քարածուխ հանելն՝ ըսենք՝ շատ դժուար է: Մեծ մասամբ երկրի շատ խորերը կը գտնուի, ուստի նախ եւ առաջ կարելոր է հողը փորել անոր հասնելու համար, իսկ հասնելէ վերջ պէտք է կտոր կտոր հանել լոյս աշխարհ: Ահա այսպիսի տեղերն ուրկից քարածուխը կը հանուի, քարածուխի հաճեալ կ'անուանուին:

Հանքերու մէջ աշխատանքը շատ ծանր է. ածուխը կը փրցընեն կտոր կտոր, որպէս զի աւելի դիւրին լինի, ծակ մը կը բա-



Տէվիի կանթեղը

նան ածուխին մէջ, քիչ մը վառող կը լեցնեն մէջն եւ պատրոյգով կը պայթեցնեն. ածուխը կտոր կտոր կը ցրուի: Այս ձեւով երկար անցքեր կը փորեն, որոնք երկրին տակ կ'երկարին մի քանի միլոններ, այդ տեղ ի հարկէ լուսով կ'աշխատին: Այս կերպով հանուած ածուխը ձիերով կամ ձեռքի սայլակներով կը բերեն շտեմարանը, իսկ յետոյ մեքենաներով կը հանեն վեր: Երբեմն կը պատահի որ այս ստորերկրեայ անցքերու առաստաղը կը փլչի, կամ հանքը ջրով կը լեցուի եւ հարիւրաւոր հանքագործներ ջրահեղձ կը լինին: Շատ անգամներ ալ, հանքերու մէջ մահացու կազեր կը հաւաքուին եւ, երբ հանքագործները ճրագով մօտենան,

յանկարձ կազմ պայթելով՝ հանքին այն մասը կը կործանի ու հա-
րիւրաւոր գործաւորներ կը մեռնին։ Այս ահարկու վտանգին ա-
ռաջքն առնելու համար՝ Տէվի անուն անգլիացին հնարած է՝ տե-
սակ մը կանթեղ, որու լոյսը ծածկուած է մետաղեայ բարակ թելէ
չինուած ցանցով մը։ ասով կտրուած կը լինի ճրագին ու կազին
հաղորդակցութիւնը։

Ահա՛ այսպիսի հանքի մէջ կ'աշխատէր Սթեֆէնսոնը։ Վեց
տղայ ունէր, եւ որովհետեւ հօրը վաստակը չէր բաւեր բոլորին
պէտքերն հոգալու համար, տղայք ստիպուած էին աշխատիլ ա-
մենափոքր հասակէն։ Տղոցմէն ամէնէն ճարպիկը Սթեֆէնսոնի
երկրորդ որդին էր, որու անունը շորճ կամ հայերէն Գէորգ էր։

Շար.

Թարգմ. Ռուսեր. ԱՆՈՒԱՐԴ ՀԱՋԱՐԱՊԵՏԵԱՆ



ԱՄԲԱՍՏԱՆ ԿԱՊԻՆԸ

Հնդկաստան գտնուած միջոցիս, կ'ըսէ ճամբորդ մը. ականա-
տես եղայ արտասովոր դէպքի մը։ Օր մը բարձրահասակ կապիկի
մը քաղաք մտնելը տեսանք. սաստիկ խռովութեան մը մէջ էր
ան, դէմքը յուզուած էր. կը շարժուէր և ձեռքերը կ'երկարէր
մօտակայ անտառի մը ուղղութեամբ. դժբաղդութիւն մը ծանու-
ցանել կը թուէր, և կարծես կը հրաւիրէր զմեզ, հետեւիլ իրեն։

— Հետեւինք կապիկին, ըսաւ սոյն անսաքանին ականատես
տեղացի մը։ Մեզի ցուցնելու բան մը ունի ան։ Բազմաթիւ ան-
ձեր ճամբայ ինկան անասունին ետեւէն, և հետաքրքրութիւնը
զիս ալ քչեց տարաւ անոնց հետ։

Կապիկը մեզի մինչեւ անտառն առաջնորդեց, և, մեկուսի
տեղ մը ուր հոշը դեռ նոր քրքրուած էր, սկսաւ քերել եռան-
դով։

Մենք ևս իրեն պէս ըրինք և իսկոյն զարհուրելի տեսիլ մը
մեզ սոսկումով շանթահարեց։ Երկու դիակներ գտանք, որոնք
խիստ փոքրաթիւ ժամերէ ի վեր կենաղիւրկ էին եղած։ Մեզնէ
մին աճապարանքով բռնեց քաղաքին ճամբան և վերադարձաւ
ոստիկանութեան հետ որ հաստատեց սպաննութիւնը։

Կապիկը տակաւին գոհացած չէր թուեր։ Դարձեալ ներկա-
ները իր ետեւը ձգելով գիւղը գնաց, փողոցէ փողոց վազեց, դի-
տելով ու ամէն կողմ հոտոտելով։ Վերջապէս կատաղութեամբ
խոյացաւ փակուած տան մը դրան առջեւ։

Ձարկին դուռը, ոչ ոք պատահականեց։ Աւելի Պէթով բախեցին, նոյն լուսթիւնը։ Դուռը քանալ տռին, ներս մտան, կասկածելի երեւոյթով երեք մարդեր գտան որ կը փափաքէին ծածկուած մնալ, քանի որ այս բոլոր անմուկը չէր կրցած դուռը բանալու հաւանեցնել զանոնք։

Կապիկին ի տես, ահաբեկեալ թուեցան տնոնք։ Կապիկը, իր կողմանէ, ուզեց նետուիլ անոնց վրայ և շատ դժուարաւ զնայեցինք զայն։ Վերջապէս նշմարեցինք որ ան իրենց չարիք ընելէ աւելի կը ջանար մեր ուշադրութիւնը հրաւիրել վերքի մը վրայ զոր այդ մարդոց մին ընդուննած էր հտքին վրայ։ Ի՞նչ դուր ձգնեցաւ պահել զայն? Ոնտիկանութեան պաշտօնակալը, քննելով զայն, հասկցաւ որ այդ վերքը կապիկին խածուածքէն գոյացած էր և քիչ ժամեր առաջ եղած էր։ Անմիջապէս ամբաստանեց երեք մարդիկը իբր հեղինակ ճամբորդներուն սպաննութեան։

— Ո՛ւր էիք քանի մը ժամ առաջ։ Ո՛ւրկէ կուգաք։ Հոս ի՞նչ կ'ընէիք։ Ինչո՞ւ թաքցած մնալ կ'ուզէիք։ Ինչո՞ւ այս կապիկն զձեզ կը ճանչնայ։

Յանցաւորները չփութեցան. անոնցմէ մին հուսկ ապա խոստովանութիւններ ըրաւ։ Ահա անոր յայտնած մանրամասնութիւնները։

Այս կապիկը որ ճամբորդներէն միոյն կը պատկանէր, ջանահրնար եղած էր իր տէրը նպաշտպանելու։ Կուոյն մէջ, մարդասպաններէն մին խածած էր յետոյ ծառի մը վրայ փախեր էր։ Ոճրագործները թողած էին որ փախչի ան, առանց կասկածելու թէ կենդանի մը իմաց պիտի տար իրենց ոճիրը և անոնց վրայ պիտի հրաւիրէր պատիժը որուն արժանացած էին։

Մ. ԿԻԻՅՈ

Յարգմ. ՀԱՅԿ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՍԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ղուկիոս Բիմաստեղն Հռոմ կիւղայ. ճամբան Մարկոս Աւրելիոսնոսի կը հանդիպի եւ ո՞ւր երթալը կը հարցնէ։ «Մեքստոս Բիմաստախիին դանախօսութիւնը մտիկ ընելո՞ւ կ'երթամ»։ Կը պատասխանէ։ Կը զարմանայ Ղուկիոսն եւ ձեռքն երկնք կը զերցնէ։ «Ջարմանալու բան չկայ, կը կրկնէ Աւրելիոսնոս, որ եւ ինչ հասակի մէջ պէնք չէ մարդ չգիտցածը նորդիլ իրեն ամօթ սեպէ»։

ՊԱՏՄԱՆԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



ՓՈՊՐԻԿ ԲԹՈՒԿԸ

(ԱՒԱՆԴԱՎԷՊ)

(Շարունակութիւն 45րդ Թիւէն)

Այսպէս անցան ամառն ու աշունը, բայց ահա ձմեռը, երկաթի ու խտաշողնչ ձմեռը որ, կը հասնի: Ամբողջ թռչունները որոնք զայն դժարճացուցած էին իրենց երգերով՝ հեռացան: Ծառերը մերկացան, ծաղիկները թօշնեցան, ու կռատուկի խոշոր տերեւը, — որուն ներքեւ կը բնակէր Բթուկը. — ինք իր վրայ դարձաւ, գօս ու դեղնած ցօղուն մը ձեւացնելով:

Խեղճ փոքրիկը ցուրտէն այնքան կը տառապէր որ, իր հա գուտները սկսան ծուէն ծուէն իյնալ: Ու ձիւներն ալ սկսան տեղալ, ամէն մէկ բաթիլը որ կ'իյնար մահու ազդեցութիւն մը կ'ընէր անոր վրայ: Թէեւ չորցած տերեւներով մը կը ծածկուէր երբեմն, բայց չէր կրնար տաքնալ. մեռնելու չափ կը մտէր:

Անտառին մօտիկ ցորենի ընդարձակ դաշտ մը կը գտնուէր, բայց հոն, սառուցիկ գետնին վրայ միմիայն ափսիներ կը նշմարուէին: Ասիկա նոր անտառի մը պէս եկաւ հէք պղտիկին, ուր կրնար վազվզել: Բոլորովին դողդոջուն, դաշտամուկի մը բնակարանը հասաւ: Յարգերուն տակէն պղտիկ ծակէ մը ներս կը մտնուէր. մուկը աղէկ կ'աշտարած էր, լեփլեցուն հատիկներ, աղւոր խոհանոց մը եւ ճաշարան մը ունէր: Պղտիկ Բթուկը իբր մուրացկան ներկայացաւ: ու քիչ մը գարի խնդրեց, ինչու որ երկու օրէ ի վեր բան չէր դրած բերանը:

— Խեղճ պղտիկ, պատասխանեց պառաւ դաշտամուկը, որ բարի սիրտ մը կը կրէր, եկուր ինծի հետ անեակիս մէջ ուտելիք կեր, տաք է հոն:

Յետոյ Բթուկին վրայ խանդաղատեցաւ, ու անելցուց.

— Քեզի կը թոյլատրեմ ձմեռը հոս անցնել, բայց պայմանաւ որ անեակս մաքրօր պահես, եւ ինծի սիրուն բաներ պատմես, վասնզի շատ կը սիրեմ պատմութիւնները:

Պղտիկ աղջիկը անսխալապէս ընդունեց այս առաջարկը:

— Այցելութիւն մը պիտի ընդունինք, ըսաւ ծո՛ք մը պառաւ մուկը. դրացիո՛ւ ամէն շաբթու անգամ մը իս տեսնալու տվորու-

Թիւնը ունի : Անիկա ինէ աւելի բարեկեցիկ է , ու գեղեցիկ զարդարուն բնակարան ունի : Եթէ քեզի հետ ուզէր ամուսնանալ , դուն շատ երջանիկ պիտի ըլլայիր : Անոր ալ պատմէ քու ամէնէն ազուրդ պատմութիւններդ :

Բայց Բթուկը իր դրացիին հետ ամուսնանալու փափաքը չունէր , վասն զի խլուրդ մըն էր այդ դրացին : Անիկա թաւապատ վերարկուի մէջ պլլուած՝ չուշացաւ այցելութեան գալ : Խօսակցութիւնը իր հարստութեան և իր կրթութեան շուրջը դարձաւ , բայց խլուրդը շատ գէշ կը խօսէր ծաղիկներուն ու արեւին նկատմամբ , վասն զի երբեք չէր տեսած զանոնք : Պզտիկ Բթուկը անոր շատ մը երգեց : Խլուրդը հմայուած անոր ձայնէն , իսկոյն փափաքեցաւ միութիւն մը՝ որ իրեն այնքան հաճոյքներ կը խոստանար , բայց բառ մը իսկ չըսաւ այդ մասին , որովհետեւ խելացի մէկն էր ան :

Իր դրացիներուն հաճոյք առթելու համար , անոնց թոյլատրեց պտտիլ՝ իրենց քահանայքին համեմատ՝ գետնափոր յետ ուղիի մը մէջ որ պիտի պեղէր երկու բնակավայրերուն միջեւ , բայց խնդրեց որ չվախնան մեռած թռչունէ մը որ անցքին վրայ կը գլուխէր , և զոր ձմեռուան սկիզբը թաղած էին հոն :

Վաշիտ անգամ որ իր դրացիները օգտուեցան այս սիրալիր առաջարկէն , Խլուրդը զանոնք առաջնորդեց այդ երկայն ու մթին նրբանցքը , հոն լուսաւորելու համար իր ալուաներուն մէջ ֆոսֆորափայլ հին փայտի կտոր մը խածնելով : Հոն՝ ուր մեռած թռչունը կը հանգչէր , Խլուրդը հողը փորեց , ծակ մը բացաւ , անանկ որ կրնար լոյսը հոն թափանցել : Նրբանցքին մէջտեղը , գետնին վրայ , ծիծեռնակի մը մարմինը կը տարածուէր , անշուշտ անօթութենէ մեռած , և որուն թեւերը սեղմուած էին կուշտերուն վրայ , գլուխն ու ոտքերը փետուրներուն տակ ծածկուած : Այս տեսարանը տխուր ու ցնցող տպաւորութիւն մը բրաւ պզտիկ Բթուկին վրայ : անիկա այնքան կը սիրէր փոքր թռչնիկները որ , ամբողջ ամառը . անոնց գեղգեղներովը զուարճացած էր : Բայց Խլուրդը՝ ծիծեռնակը անգին հրեց իր թաթերով աւ ըսաւ . — « Այլեւս պիտի չկրնա՞յ երգել , ի՞նչ դժբախտութիւն թռչուն ծնիլը : Ծնորհակալութիւն Աստուծոյ , որ իմ զաւակներուս ոչ մէկուն ասանկ ճակատագիր մը վերապահած է : Այս տեսակ արարած մը՝ իր ճի՛ւղ , ճի՛ւղէն զատ ուրիշ որ եւ է հարստութիւն չունի , ու ձմեռն ալ անօթութենէ կը մեռնի :

— Շատ խելացի կերպով կը խօսիք , պատասխանեց պառաւ մուկը , ճի՛ւղ ճի՛ւղ բանի մըն ալ չի ծառայեր . արդար է որ այսպէս թշուառութեան մէջ մեռնին . և սակայն , կան ալ որ իրենց

երգել գիտնալնուն համար հպարտութեամբ կը սոնքան:

Բթուկը բան մը չըսաւ. բայց, երբոր միւսները իրենց կռնակը թռչունին դարձուցին, ինք դէպի ան հակեցաւ, ու, մէկ կողմ առնելով փետուրները որոնք անոր գլուխը կը ծածկէին, անոր փակ աչքերուն վրայ համրոյր մը դրաւ:

« Ասիկա թերեւս նոյն ինքը ան է որ ինծի համար այնչափ սիրուն կերպով կ'երգէր ամառը, խորհեցաւ ան, խեղճ պզտիկ թռչուն. ինչչափ կը մեղքնամ քեզի: »

Խլուրդը, ծակը բանալէն ետքը, տիկիները իր տունը հրաժեցուց: Պզտիկ Բթուկը ամբողջ գիշերը չկրնալով քնանալ, ելաւ, յարդէ տաքուկ գորգ մը հիւսեց և տարաւ մեռած թռչունին վրայ տարածեց: Ապա անոր քովերը բամպակով լեցուց, — զոր մուկին տանը մէջ գտած էր, — իբր թէ վախնար որ անկենդան մարմինը հողին խոնաւութեան մէջ վատթարանար:

Ու, շոյելով թռչնիկը, իր գլուխը անոր կուրծքին վրայ դրաւ, աղապատանքի խօսքերով. բայց իսկոյն ուքի ելաւ վախցած, թեթեւ բախում մը լսեր էր, որ թռչունէն կուգար, վասն զի դեռ չէր մեռած, այլ միայն թմրած էր: Տաքութիւնը կեանք տուած էր անոր:

Աչունին, ծիծեռնակները տաք երկիրներ կը վերադառնան, եթէ մէջերնէն մէկը ճամբուն վրայ ուշանայ, ցուրտը իսկոյն կը զգեստնէ զայն մեռելի մը պէս, ու ձիւնը անոր վրայ կը փռուի:

Բթուկը վախէն կը դողդղար. ինք այդ պզտիկ մսկոտ թռչունիկին քով հսկայ մը կ'երեւար: Եւ սակայն քաջպերուեցաւ, բամպակը աղւոր մը սեղմեց թռչունին շուրջը. զնաց փնտռեց անանուխի տերեւ մը՝ զանիկա ծածկելու համար, ու անոր գըլխուն վրայ ծածկեց:

Հետեւեալ գիշերը, հիւսնդին քովը երթալով դարձեալ, ողջ գտաւ զայն, բայց այնքան տկար՝ որ հազիւ հազ կրնար վայրկեան մը նայիլ պզտիկ աղջկան, որ ձեռքը հին փայտի կտոր մը ունէր լուսաւորելու համար: Յետոյ ծաղիկի թերթի մը մէջ անոր ջուր տարաւ: Թռչունը խմեց ու անոր պատմեց թէ ինչպէս, իր թեւերէն մէկը փուչերու մացառ է մը պատռտելով, չէր կրցած միւսներուն հետ տաք երկիրներ երթալ: Փետին ինկած էր, ու այդ վայրկեանին, չէր յիշեր թէ իրեն ինչ էր պատահած:

Ամբողջ ձմեռը, մուկէն ու խլուրդէն գաղտնի, պզտիկ Բթուկը խնամեց այսպէս ծիծեռնակը՝ ամենամեծ գորովանքով մը: Պարնան սկիզբները, երբ արեւը սկսաւ երկիրը տաքցնել, թռչունը իր հրաժեշտը տուաւ աղջնակին, որ խլուրդին ատենօք փորած ծակը բացաւ: Ծիծեռնակը իր բարեբարութիւն առաջարկեց իրեն

իմ նուէրս ինծի վայել բան մը պիտի ըլլայ անշուշտ:

Ահաւաստիկ սքանչելի կշիռ մը, որով այսուհետեւ պիտի կարենաս մխիթարուիլ բոլոր վշտերէդ, եթէ դուն գիտնաս զայն գործածել, զիտէ »:

Տղան յուշիկ մը վեր առաւ իր արտասուածոր աչքերը, և նըմարեց սքանչելի կշիռ մը բիւրեղեայ թաթերով: Նժարներէն մէկուն մէջ կը գտնուէր աղամանդեայ ծանրութիւն մը, որուն վրայ տղան զարմանալով նշմարեց իր իսկ անունը ոսկետառերով քանդակուած « Ժիւսթէն »:

— Մխիթարուելու համար երբ մէկը զքեզ վշտացունէ, գուրգուրանօք մը շարունակեց դիցանուչը, ուրիշ բան չպիտի ընես, եթէ ոչ քու անունդ պիտի փոխադրես միւս նժարին մէջ: Յայնժամ փոխանակ ըլլալու այն որ կուլայ, պիտի գտնես ինքզինքդ իսկոյն անոր տեղը որ զքեզ լացուցած է:

Դիցանուչը աներեւոյթ եղաւ:

Երբ տղայք բանէ մը վշտացած կը տրտմին կամ կուլան, անմիջապէս իրենց շուրջը կը փնտռեն կարեկից մը, պաշտպան մը: Եւ երբ կը յաջողին ինչ սերտ սէր մը և յարակից հոգ մը կը տածեն անոր նկատմամբ:

Եւ Ժիւսթէն արդէն այդ հոգը կը տածէր դիցանուչին նկատմամբ և ուրիշ տիրաժամի մը մէջ կ'ուզէ փորձել այդ սքանչելի կշիռը ու ձեռք կ'առնէ, իր անունը աջ նժարին մէջ էր. կը փոխադրէ զայն ձախին մէջ, ի՛նչ սփանշելիք: Այլեւս այն լացող տղան չէ՛, ահաւաստիկ փոխուած նոյն իսկ իր մօր՝ որ զայն լացուցած էր: Եւ լըջօրէն կը մտածէ ինչ որ կը մտածէ մայրը:

— Ո՛հ, որքան տխուր եմ երբ կը տեսնեմ թէ զաւակս ծուլութեան ճամբան բռնած է: Ո՛հ, որքան գաղտնի արցունքներ կը թափեմ երբ կը տեսնեմ որ առաքինութիւններուն փոխարէն թերութիւնները կը շատնան: Խիստ տկար եմ զայն ուղղելու, պիտի տառապիմ երբ տեսնեմ անոր տառապիլը, պիտի լամ՝ երբ տեսնեմ անոր լալը: Բայց ինչ օգուտ, իմ պարտականութիւնս է, զայն լաւագոյն կերպով պիտի կատարեմ... պէտք է խիստ յանդիմանութեամբ մը զայն զգուշացնել: Ու յանկարծ — « Մայրի՛կ, մայրի՛կ, գոչեց Ժիւսթէն, իմ տղայական վիշտս որքան քիչ բան է քու կինիդ առջև: Ուստի այսուհետեւ կ'ուզեմ աշխատիլ, կ'ուզեմ քեզ սիրել, կ'ուզեմ քեզ երջանիկ ընել: » Ժիւսթէն այն ատեն համոզուած՝ տեղը դրաւ իր անունը առաջին նժարին մէջ և ուրախ զուարթ ոտքի ելաւ: Մխիթարուած էր:

Վ. ԱՌԱՔԵԼ, Մ. ՔԵՉԵԱՆ

ընկերանալ դայար անտառին երկայքն ի վեր, իրեն կռնակը նըստած: Բայց Բթուկը գիտէր որ իր մեկնումը դաշտամուկին վիշտ պիտի պատճառէր:


— Չէ՛, ըսաւ, չեմ կրնար:

— Մնաս բարով ուրեմն, աղւոր պղտիկ տղայ, քաատասխանեց ծիծեռնակը՝ Թռչելով արեւին տակ: Բթուկը արտասուաթոր աչքերով անոր մեկնումը դիտեց. օ՛հ, չա՛տ կը սիրեր փոքրիկ ծիծեռնակը: « Եի՛ւ, եի՛ւ, » ըրաւ Թռչունը, և յետոյ աներեւու-թացաւ:

Թարգմ. Վ. Գ.

ԱՆՏԵՐՈՐՆ
(Շարունակելի)

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ



ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Նրախագէտ Բլաւմ Լեւ ծնողաց նոյն իսկ իրենց
խառնութիւններուն նկատմամբ:

Փոքրիկ տղաներ, ձեր դաստիարակները և ուսուցիչները յաճախ կը պատմեն ձեզի բարոյական դասեր ու պատմութիւններ, զորս հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէք:

Գիտեմ, կը սիրէք պատմութիւնները և զանոնք խօսողները: Ուստի ես ալ թարգմանաբար ձեզ կը ներկայացնեմ պատմութիւն մը որքան հետաքրքրական, նոյնքան օգտակար:

Գիւղի մը ծայրը կը բնակէին միջին դասակարգէ ընտանիք մը: Այրի մայր մը, աղջիկ մը, և մանչ մը Ժիւսթէն անուն:

Այս վերջինը օր մը մօրը խիստ յանգիմանութենէն վշտացած, իրենց տան փողոցը նստած հեծկլտանքով կուլար: Ո՛չ մայրը քովը կ'երթար և ոչ ալ մէկը. կարեկից մը պէտք էր որպէս զի զայն վերադարձէր իր տղայական ուրախութիւններուն: Եւ իրաւ ալ այդ գերը ստանձնեց դիցանուշ մը երբ պատահամբ կ'անցնէր: Սա կարեկցօրէն մօտեցաւ ու—« Սրբէ արցունքներդ, ըսաւ անոր, կ'ուզեմ քեզի նուէր մը տալ, նուէր մը, որ զքեզ ուղիղ ճամբուն մէջ պիտի դնէ:

Մարդիկ զիս ուղղամտութեան դիցունհի կ'անուանեն, ուստի

ՆԱՄԱԿԱՊԲՈՒԹԻՒՆ

ՊԶՏԻԿ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՍ

Ինծի կը հարցնէք թէ՛ նամակ մը ինչպէս գրելու է։ Այս քանի մը դիտողութիւններ՝ որոնցմէ կրնաք օգտուիլ։

Ոմանք, նամակներուն մէջ, կ'առաջանան միշտ, ուր կենալնին առանց գիտնալու. ուրիշներ ալ, ընդհակառակը, անյարմար լակոնաբանութիւն մը կը կեղծեն, ինչ որ նպատակէն ասդին կամ անդին նետել ըսել է, շեղելով ճիշդ կեդրոնէն՝ որ կը կայանայ կարեւորը կանոն բռնելուն մէջ, թէ որ ըսելիք չատ բաներ ունիք, նեղկուկ տեղ մը անփոփոխիւր գէ'չ է. բայց, եթէ բառ մը բաւական է ձեր միտքը բացատրելու, զգուշացէք իսկ մանրամասն երկայնարանութիւններէ, որոնք նուազ հաճելի են։ Նամակի մը երկարութիւնը կամ կարճութիւնը՝ նիւթին համեմատական ըլլալու է։

Ճշտութիւնը հերի'ք չէ, մանաւանդ վճի'տ ըլլալու է, նամակը առեղծուած չէ։ Աւելի աղէկ է քիչուկ մը խօսուրուտող ըլլալ քան թէ դժուարիմաց՝ կարի ուշ զննելով կարճութեան։ Վերջապէս, պատշաճ պայծառութեամբ գրուած նամակն ան է, որ, հասկցուելով անուսէն ինչպէս նաև ուսեալէն, հաւասարապէս հաճելի կ'ըլլայ երկուքի'ն ալ։

Վայելչութիւնը երրորդ յատկութիւն մըն է։ Առանց ատոր, նամակ մը ցամաք, տխուր ու միաձեւ է. անով, ընդհակառակն, ոճը կը զուարթանայ ու կը հոսի մեղմիկ, Խայթող առածներ, յարմար առակներ, պզտիկ մանրավէպեր, զուարթ կախումներ, հանճարեղ յանկարծարանութիւններ, վերջապէս նամակ մը իր մէջ կ'ընդունի բոլոր ան բաներն՝ որոնք միտքը կ'արթնցնեն. միայն թէ բռնազբօսիկ ըլլալու չեն։ Նամակն անճաճ պերճանքէն կը վընասուի, նամակներու մէջ ձեւաւոր ոճը կրնայ դրուիլ, պայմանով որ հազուադէպօրէն ու համեստութեամբ երեւայ ա'ն։ Բացադարձութիւնը, հակադրութիւնը, զուգաչափութեամբ բաշխուած նախադասութեան անդամները՝ հոստորներու ձգելու է։ Ու թէ որ, երբեմն փափաքն ունենաք իրենցմէ փոխ առնելու ատ հանդերձանքը, զուարթախոհութեամբ համեմել չմոռնա'ք։ Ու լաւագոյն կերպով չէի կրնար աւարտել գրութիւնս՝ քան թէ խրատառակիկ սա հատուածովը։

Թռչունները կը վիճէին թէ՛ իրենց մէջէն ո՞վ արժանի է գեղեցիկ կոչուելու, եւ կը փութային զարգարելու ու գեղեցկացրնելու ինքզինքնին կեղծ փետուրներով։ Արծիւը մոռածեց թէ իր

է՛ն մեծ ու գեղեցիկ զարդը՝ բնաւ չունենալն է։ Ամէնէն աղւոր նամակն ա՛ն է, իմ կարծիքովս, որ բնական ու պարզ կերպով գրուած է։

Ասոնք են, կարծեմ, նամակագրութեան ոճին յատկութիւնները։

Մ. ԻՍՊԻՐԵԱՆ

ՄԱՆԶՈՒՄԷԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Ուրախութեամբ կ'աւետենք թէ Շնորհիւ Հպատակասէր Վեհ. ՍՈՒԼԹԱՆԻ գթառատութեան, Մանգումէ վերսկսաւ հրատարակուիլ այս երկուշարթի օրուէն։

Մանգումէ, իր հրատարակութեան օրէն ի վեր ստացած է անօրինակ ժողովրդականութիւն մը, և անոր խմբագրական մարմինն ալ, ինքզինքը արժանացնելու համար այդ համակրութեան, օրէ օր նոր ոյժ մը կուտայ թերթին այլազանութեան։

Չկայ վէպ մը զոր մեր ժողովուրդն այնքան անյագօրէն ու տենդագին անհամբերութեամբ կարդացած ըլլայ, որքան ԿՆՆՈՒՑ Հանգոյց մըն։ Գրեթէ տարիէ մը ի վեր Քասիմ կրցաւ վառ պահել ընթերցողին հետաքրքրութիւնը՝ իր վիպագրի բեղուն այլազանութիւններովը։

Մանգումէ այդ վէպն իր ընթերցողներուն նուիրելէ զատ, իւրաքանչիւր ընթերցողի կը նուիրէ Աւխարհաբառ Նարեկ մը, որ իբր պարզ գիրք մը հազիւ 20 դրուով կարելի էր ծախել, առանց հաշուելու իր բարոյական անհամեմատ արժանիքը՝ ըլլալով մեր ամէնէն սիրած ու պաշտած գիրքը։

Մանգումէի վերսկսելէն ի վեր հրատարակած իւրաքանչիւր թիւը մէյմէկ գրական գոհար է ստորագրուելով ամէնէն ժողովրդական ու սիրուած անուններէն։ Առօրեայ ամէն մէկ թերթ շատ աւելի ճոխ բովանդակութիւն մը ունի քան կարգ մը չաբաթաթերթեր՝ որոնք գրական տիտղոսը իրենց մենաշնորհ ընել կ'ուզեն։

Մանգումէի վերսկսումին առթիւ մեր սրտագին շնորհաւորութիւնները կ'ուղղենք թերթին տնօրէն Մեծ. Յովհաննէս Ֆէրիտ էֆ. Քայսէրեանի եւ անոր խմբագրական մարմինինն որոնք ձեռք ձեռքի տուած, կը յաջողին այսքան սիրելի ու ժողովրդական օրաթերթ մը հրատարակել։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՄԷՆԵՆ Ժողովրդական, ԱՄԷՆԵՆ Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԵՆ ՇԱՏ. ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԻ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

ԽճԷ Բօնետը. — Ագահուրիւն. — Պարահանդէտը ինք տարի առաջ (Յանազող Լուսինեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչու եւ չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց. Պատասխան (Յ. Հանեան). — Անխոհեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Աւիլերմս եւ կայծակը. — Բաւն եւ . . . դարու հաշմը. — Կրօններու պատմութիւնը. — Այծեամի որսը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու աեղ. — Նշանաւոր միականիներ. — Մխիթարական բուրբ յոռետես բարեկամիս (Քասիմ). — Սրկրագործական Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Յաւին դարմանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչքերու առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը գտնող պարոնը. — Տամակնիդ, պարսնա՛յ. — Հինգ առ հարիւր տոկոս. — Նամակադրոշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթօ. — Բորնիշոնի կրագը. — Մեղրալուսնի նամբորդութիւն. — Մայր ու տղայ. — Ա.Կ.Ն.ՅԻ ՍԱՐԱՆ ՄԸ. — Գիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասենին. — Բաւն բարայով աշխարհիս ոսկին. — ԹԻՐԸՍԹԻՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒԱՐՃԱԿԻՔՆԵՐ եւայլն, եւայլն:

Դիմն է 5 Դանեկան. — Դաւառներ՝ քղբասարով 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի՝ մենէջիկնգ հաս գնողներուն վեցերորդ մը նուէր կը տուի



ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՕՍԱՆԻՔ



Շուրջանակի ՅԱ դուռ ունի մէջտեղի չըջաբակն, ուր երեք տղաք կը խաղան. եթէ ուզէք կրնաք անոնց միանալ և խաղին մասնակցիլ երբ որ եւ է մէկ դուռնէն անցնելով ճամբան գտնել յա-
ջողիք :

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Վաճառականական գործառնությունն հմուտ եւ հրապարակի վրայ արդէն վաղուց ծանօթ (ուսուցիչ) տոմարակալ Յ. Էֆ. Պաղտասարեան, այս անգամ դասարան մը հաստատած է ի Մէրճան, իմամ ալի խան, թիւ 20 սենեակը, Ուրբաթ եւ կիրակի օրեր կը դասախօսէ հոն առեւտրական օրինաց, սովորութեանց եւ վաճառականական այլեւայլ գործառնություննց վրայ, պարզ եւ կրկնատոմարի ու առեւտրական հրապարակի մէջ պատահելիք ամբողջ հաշիւներուն վրայ ամենակարճ եւ գործնական կերպով Հայ, Թուրք եւ Ֆրանսերէն լեզուներով, Միմիայն մէկ մէճիտ ամսակալնով, Միւս օրերուն տրամադրելի է այցելաբար դասախօսել նաեւ մասնաւորաց, կնճուռ հաշիւներ կարգաւորել եւ տետրակներ յարդարել դիւրամատչելի գնով, ինչպէս եւ դիւրահասկնալի ոճով, տոմարակալութեան մինչեւ ցարդ բրած առաջդիմութեանց ու նորանոր գիւտերուն համաձայն, ունենալով հանդերձ սոյն ճիւղին մէջ բազմաթիւ տարիներ անձնական ու գործնական փորձառութիւններ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնությունն առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանգուցիսակի Մեծ. Բաժանորդներէ եւ Գործակալներէ կը խնդրենք որ բաժանորդագիւններէ եւ յանձնարարությունիւններէ մընացած պարտքերին վճարել բարեհաճին այլեւս, որովհետեւ տարւոյն 11 ամիսը լրանալէն վերջը՝ դեռ շատ տեղեր սոյնօրինակ հաշիւներ անվճար կը մնան:

ԽՄԱՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆ

